ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՆԱ-ՊԸԱՇՁԲ-16/8-1»

ք. Երևան << 18 >> << հոկտեմբերի >> 2016 թ.

ՀՀ Նախագահի աշխատակազմը, ի դեմս գործերի կառավարիչ՝ Վ.Գրիգորյանի, որը գործում է ՀՀ Նախագահի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << ՌԵՄ գրուպ >> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Ռշտունիի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Ջրի խողովակների անցկացման աշխատանքներ** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **ս.թ. նոյեմբերի 30-ը:**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 **օրինակ (Հավելված N 4)** և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **(Հավելված N 4.1)**:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5 440 021(հինգ միլիոն չորս հարյուր քառասուն հազար քսանմեկ) ՀՀ դրամ, որից 906 670 (ինը հարյուր վեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի

Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ	<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ
Ք.Երևան, Բաղրամյան 26	Ք.Երևան, Արշակունյանց 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
2/2 900011204089	2/2 1570021103260100
ՀՎՀՀ 00006505	ՀՎՀՀ 02209604
Գործերի կառավարիչ	Տնօրեն
Վ. Գրիգորյան----------	Ա. Ռշտունի----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 18 >> հոկտեմբերի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀՆԱ-ՊՀԱՇՁԲ-16/8-1» գնման պայմանագրի

ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑԱՆԿ

Հ/Բ	Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր	Չ/Մ	Ծավալը	Գին	Գումար
1	Ջրի փական /Valsar Baterfly կամ համարժեք/ 4//	Հատ	3	36,600	109,800
2	Ջրի փական /Valsar Baterfly կամ համարժեք/ 3//	Հատ	6	28,500	171,000
3	Ջրի փական /Valsar Baterfly կամ համարժեք/ 2//	Հատ	8	20,500	164,000
4	Ջրի փական /Valsar Baterfly կամ համարժեք/ 1//	Հատ	4	12,500	50,000
5	Զգոն /ամբողջական մետաղական/ 1//	Հատ	15	1,450	21,750
6	Զգոն /ամբողջական մետաղական/ 2//	Հատ	15	2,750	41,250
7	Ֆլանեց 2//	Հատ	9	1,950	17,550
8	Ֆլանեց 3//	Հատ	9	2,750	24,750
9	Ֆլանեց 4//	Հատ	6	4,500	27,000
10	Մետաղական խողովակ 2,5 մմ 2//	մ	52	3,000	156,000
11	Մետաղական խողովակ 2,5 մմ 100//	մ	8	6,500	52,000
12	Մետաղական խողովակ 2,5 մմ 3//	մ	13	3,200	41,600
13	Ատվոդ 2//	Հատ	33	1,500	49,500
14	Ծծակ 1//	Հատ	15	600	9,000
15	Ծծակ 2//	Հատ	32	500	16,000
16	Հետադարձ փական 2// /Valsar կամ համարժեք/	Հատ	2	33,000	66,000
17	Ֆիլտր 2// /Valsar կամ համարժեք/	Հատ	2	17,000	34,000
18	Բաչոկ 2//	Հատ	11	1,450	15,950
19	Մոնոմետր	Հատ	3	4,500	13,500
20	Հեղյուս մանեկ /100 մմ*10մմ/	Հատ	92	450	41,400
21	Փական 1/2// /Jakomini կամ համարժեք/	Հատ	15	3,000	45,000
22	Ֆիլտր 1/2// /Jakomini կամ համարժեք/	Հատ	9	3,000	27,000
23	Եռյակ 1/2// 16*20*16 /Kaldo կամ	Հատ	27	2,500	67,500

	համարժեք/				
24	Բաչոկ 1/2" /Kaldo կամ համարժեք/	Հատ	30	1,450	43,500
25	Անցում 3/4 HP*1/2 HP /Kaldo կամ համարժեք/	Հատ	31	1,500	46,500
26	Անցում 3/4 BM*1/2 HP /Kaldo կամ համարժեք/	Հատ	38	1,500	57,000
27	Մուֆտ C. МУФТ 16*1/2 /Kaldo կամ համարժեք/	Հատ	28	1,700	47,600
28	Ավտոմատ վանտուզ	Հատ	7	7,500	52,500
29	Ապակյա վատման պատված ալյումինե թաղանթով	մ	10	1,700	17,000
30	Ալյումինե ռադիատոր /Kaldo կամ համարժեք/	Հատ	20	5,200	104,000
31	Բուկս 40 SENATOR կամ համարժեք	Հատ	18	1,950	35,100
32	Զգոն տաշած մետաղական	Հատ	17	550	9,350
33	Անցում GA /M1 1/4*F1/	Հատ	22	1,750	38,500
34	Անցում տաշած /1/4 M -1*F/	Հատ	17	1,250	21,250
35	Հակակոռոզիոն ներկ /ALVAN կամ համարժեք/	Լ	11	2,400	26,400
36	Գերլուծիչ THIMVER կամ համարժեք	Լ	7	1,200	8,400
37	Մետաղական երկայնաձող 2,5մմ*4մմ	մ	11	950	10,450
38	Մետաղական խող. 3 դ 3 մմ	մ	9	4,800	43,200
39	Մետաղական խող. 4 դ 3 մմ	մ	4	6,500	26,000
40	Մետաղական խող. 1 դ 3 մմ	մ	18	2,800	50,400
41	Մետաղապլաստե խող. D=20 /Հերց կամ համարժեք/	մ	117	1,850	216,450
42	Եռյակ T 16*16*16 /Kaldo կամ համարժեք/	Հատ	15	2,500	37,500
43	Փական Z 16*1/2 F /Kaldo կամ համարժեք/	Հատ	14	2,200	30,800
44	Փական S 16*1/2 m /Kaldo կամ համարժեք/	Հատ	15	1,800	27,000

45	Խողովակ 40 Ֆ /Kaldo կամ համարժեք/	մ	17	1,950	33,150
46	Ջրի փական PP 40*1,1/4 F /Kaldo կամ համարժեք/	Հատ	9	3,200	28,800
47	Անցում 1m*1/2 F /Kaldo կամ համարժեք/	Հատ	9	2,200	19,800
48	Ռադիատորի փական ուղիղ 1/2 /Kaldo կամ համարժեք/	Հատ	2	7,500	15,000
49	Պոլիպրոպեն PS32*1M	Հատ	10	1,000	10,000
50	Եռյակ T 40*40*40	Հատ	11	750	8,250
51	Փական S 32*40	Հատ	9	800	7,200
52	Անկյունակ L 40*40-45	Հատ	9	800	7,200
53	Անկյունակ L 40*40-90	Հատ	9	800	7,200
54	Անկյունակ 16*1 h-BH /Kaldo կամ համարժեք/	Հատ	19	2,250	42,750
55	Փականի ապամոնտաժում և նորի տեղադրում 4″ /Valsar Baterfly կամ համարժեք/	Հատ	3	8,000	24,000
56	Փականի ապամոնտաժում և նորի տեղադրում 3″ /Valsar Baterfly կամ համարժեք/	Հատ	6	8,000	48,000
57	Փականի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″ /Valsar Baterfly կամ համարժեք/	Հատ	8	8,000	64,000
58	Փականի ապամոնտաժում և նորի տեղադրում 1″ /Valsar Baterfly կամ համարժեք/	Հատ	4	8,000	32,000
59	Զգոնի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″ զոդման միջոցով	Հատ	17	1,200	20,400
60	Ծծակների ապամոնտաժում և նորի տեղադրում 1″ զոդման միջոցով	Հատ	15	500	7,500
61	Ֆլանեցների ապամոնտաժում և նորի տեղադրում 2 դ զոդման միջոցով	Հատ	9	3,000	27,000
62	Ֆլանեցների ապամոնտաժում և նորի տեղադրում 3″ զոդման միջոցով	Հատ	9	3,000	27,000
63	Ֆլանեցների ապամոնտաժում և նորի տեղադրում 4″ զոդման միջոցով	Հատ	6	3,000	18,000

64	Մետաղական խողովակի ապամոնտաժում և նորի անցկացում զոդման միջոցով խրամուղիների միջով 2″	մ	52	2,500	130,000
65	Մետաղական խողովակի ապամոնտաժում և նորի անցկացում զոդման միջոցով խրամուղիների միջով 100 մմ	մ	8	3,000	24,000
66	Մետաղական խողովակի ապամոնտաժում և նորի անցկացում զոդման միջոցով խրամուղիների միջով 3″	մ	13	2,500	32,500
67	Ատվոդի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″	Հատ	17	1,200	20,400
68	Զգոնի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″	Հատ	15	2,000	30,000
69	Հետադարձ փականի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″	Հատ	2	15,000	30,000
70	Բաչոկի ապամոնտաժում և նորի տեղադրում 2″	Հատ	9	1,500	13,500
71	Նոր մանոմետրի տեղադրում 3″	Հատ	3	3,000	9,000
72	Հետադարձ փականի տեղադրում 1/2″	Հատ	9	2,500	22,500
73	Ջրի ֆիլտրի տեղադրում 1/2″	Հատ	9	2,500	22,500
74	Եռյակի տեղադրում 1/2″	Հատ	24	800	19,200
75	Բաչոկի տեղադրում 1/2″	Հատ	28	400	11,200
76	Անցման տեղադրում 3/4 ВМ-1/2 Н	Հատ	28	500	14,000
77	Անցման տեղադրում 3/4 НР-1/2 НР	Հատ	31	500	15,500
78	Անցման տեղադրում С. МУФТ16*1/2	Հատ	24	800	19,200
79	Վանտուզների տեղադրում	Հատ	7	15,000	105,000
80	Ռադիատորների ապամոնտաժում և նորի տեղադրում	Հատ	20	1,000	20,000
81	Բուկս 40 /SENATOR կամ համարժեք/ տեղադրում	Հատ	6	750	4,500

82	Մետաղական տաշած զգոնի տեղադրում զոդումով 2″	Հատ	15	500	7,500
83	Անցում GA տեղադրում /M1 1/4"F1/	Հատ	14	750	10,500
84	Տաշած անցման տեղադրում /1,1/4 M - 1"F/	Հատ	12	500	6,000
85	Մետաղական երկայնաձողի անցկացում զոդման միջոցով	մ	7	500	3,500
86	Մետաղական խողովակների ապամոնտաժում և նորի անցկացում 4″ զոդման միջոցով	մ	3	4,000	12,000
87	Մետաղական խողովակների ապամոնտաժում և նորի անցկացում 1″ զոդման միջոցով	մ	7	1,800	12,600
88	Ջրի ֆիլտրի տեղադրում 2″	Հատ	2	8,000	16,000
89	Մետաղապլաստե խող. Անցկացում և միացում համակարգին խրամուղիների միջով զոդման միջոցով	մ	107	1,900	203,300
90	Կախովի առաստաղի ապամոնտաժում և վերականգնում	քմ	27	1,500	40,500
91	Խողովակի անցկացում F 40	մ	20	1,500	30,000
92	Ջեռուցման կաթսաների մաքրում, վերականգնում և փորձարկում	Հատ	2	170,000	340,000
93	Փական 1/2 դ /ARKO կամ համարժեք/	Հատ	11	3,000	33,000
94	Լվացարանի ծորակ երկտեղանի	Հատ	1	9,000	9,000
95	Նոր Տերմոմետրի տեղադրում	Հատ	1	12,000	12,000
96	Գոֆրե SOLO Plast կամ համարժեք 40մմ=1200մմ	Հատ	5	1,500	7,500
97	Գոֆրե SOLO Plast կամ համարժեք 32մմ=800մմ	Հատ	8	1,500	12,000
98	Պղնձե խողովակի տեղադրում 45 սմ	Հատ	7	2,000	14,000
99	Պրեսգրանիտի քանդում և նորի տեղադրում	քմ	6	18,000	108,000
100	Ծորակ մեկ տեղանոց	Հատ	1	6,000	6,000

Ընդամենը	4,084,100
Շահույթ 11%	449,251
Ընդամենը	4,533,351
ԱԱՀ 20%	906,670
Ընդհանուր	5,440,021

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք.Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ՝

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ
Ք.Երևան, Արշակունյանց 46
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570021103260100
ՀՎՀՀ 02209604
Տնօրեն

Ա. Ռշտունի----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 18 >> հոկտեմբերի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀՆԱ-ՊՐԱՇՁԲ-16/8-1» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Ջրի խողովակների անցկացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից	30.11.2016թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			30.11.2016թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք.Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ
Ք.Երևան, Արշակունյանց 46
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570021103260100
ՀՎՀՀ 02209604
Տնօրեն

Ա. Ռշտունի----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 18 >> հոկտեմբերի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀՆԱ-ՊՐԱՇՀԲ-16/8-1» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ջրի խողովակների անցկացման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	5 440 021	5 440 021	5 440 021	5 440 021

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամորտական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք.Երևան, Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
հ/հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ՝

Վ. Գրիգորյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ
Ք.Երևան, Արշակունյանց 46
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
հ/հ 1570021103260100
ՀՎՀՀ 02209604
Տնօրեն

Ա. Ռշտունի----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 18 >> հոկտեմբերի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀՆԱ-ՊԸԱԾՁԲ-16/8-1» գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
<<ՌԵՄ գրուպ>>ՍՊԸ	ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք.Երևան, Արշակունյանց 46	Ք.Երևան, Բաղրամյան 26
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 1570021103260100	Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 02209604	ՀՎՀՀ 00006505

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 18 » «հոկտեմբերի» 2016 թ.

Պայմանագրի համարը՝ *«ՀՀՆԱ-ՊԸԱԾՁԲ-16/8-1»*

Պատվիրատուն՝ ի դեմս գործերի կառավարիչ՝ Վ.Գրիգորյանի և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս Ընկերության Տնօրեն՝ Ա. Ռշտունու, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
<< 18 >> հոկտեմբերի 2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՀՀՆԱ-ՊԸԱՇՁԲ-16/8-1» գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ՌԵՄ գրուպ >> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2016թ. հոկտեմբերի 18 ին կնքված N «ՀՀՆԱ-ՊԸԱՇՁԲ-16/8-1»գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախազծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն